*Նոյնպէս՝*

*10.*- 1599.— Յշտկ է խչս *ԾՂՑԻ* պապ *ՅՎ-ՆՍԻ* թոռն *ՄՈՒՇԵԽԻՆ*։ թվ ՌԽԸ (1599):

*Ս. Փառաանից մատրան մէջ դեղին մարմարէ* 80 × 43 *սնտմ. մեծութեամբ տապանաքարին վրայ կը կարդացուի՝*

*11.*- 1601.— Յոր վսն անչափ սիրոյ քոյին. բանդ ի կուսէն առեր մարմին. ապաչանօք ածածնին թող ըզյանցանս *ՏՐ ԱԶԱՐԻԱՅ ԿԱԹՂԻԿՈՍԻՆ*, որ եւ հանգեաւ ի մեծ թվին. ՌԾ աւելորդին. (1601). յորժամ գայցես աշխարհն կրկին Յարո՛ ըզսա փառաւք քոյին. ամէն:

*Նոյնպէս՝*

*12.*- 1602.— Սբ խչս յշտ է *ՁՈՂՑԻ ՅՈՎՆԻՍԻ* որդի *ՍՈՒՂԹԱՆՈՒՄԻՆ*. թվին ՌԾԱ (1602):

*Նոյնպէս՝*

*13.*- 1604.— Յիշատակ է սբ խաչս *ՅԱԿՈԲԻՆ, ՄԱՆՍՈՒՐԻՆ, ՍՊԱՀԱՆԻՆ* ? թվին ՌԾԳ (1604):

*Ս. Փառաանից հին մատրան արեւմտեան որմին առջեւ, դեղին միակտուր մարմարինի վրայ* 190×55 *սնտմ. մեծութեամբ, տեղ տեղ վնասուած բրիչի հարուածներէ՝*

*14.*- 1608.— Յս Քս տող երկնային երկրպագե ... եւ քոյին. որ կամաւ հող հանեալ հոգին, իջեր յերկնից յաշխարհ ըստորին:

Վս ադեսից ... մեծ այգին. զի երկոբեալ քո սիրելին նուաստացար յարգանդ կուսին եւ մարդ եղեր բոլորովին:

Չարչարանօք անհնարին. զմահ յանձն առեր ի վր խաչին. եղար ներքոյ կընքեալ վիմին, ի կըռածոյ գերեզմանին:

Յարեար փառօք ածային եւ համբարձար առ հյր յերկին. եւ յորժամ գաս դրձել կրկին կատարածի աւուր վերջին:

Յայնժմ յիշեա յողորմութբ *ԶՀԱՅՐԱՊԵՏՍ* հաւատարիմ, *ԶՏԷՐ ՊԵՏՐՈՍ ԿԹՂԿՍՆ* որ կայ եղեալ յայս տապանին:

Լուսաւորեա զհոգի սորին ընդ լուսերամ սբոց քոյին դասաւորեալ ընդ անուանակցին սբ Պետրոսին մեծի վէմին:

Եւ զպատուական ոսկերք սորին զոր մեծարել ի մէնջ պատուին. բժշկութի ցաւոց լիցին. որք հաւատով դիմել ? մերձին:

Սա ի հօրէ ծընել լինի, *ԿԱՐԿԱՌ* անուն փոքր քաղաքի եւ սբութեբ ինքն սնանի, ոպ տատրակ յանապատի:

Եւ յափըն մեծ *ԵՓՐԱՏ* գետի. ի *ՎԱՆՔՆ ՍԲ ՏԻՄՈԹԷԻ*. զամս. Խ. եւ այլ աւելի վարս ուղղէ ազգի ազգի:

Այլ եւ ունէր շնորհաց հոգին եւ հռչակեալ իմաստ սորին ածայբան մեծ վրդպտ բացայայտող իւրոց բնին:

Բազում որդիս ի փառս ածեն, հանեալ ի բարձր աստիճանի. տասից տուեալ է զաւազան որոց անարգն *ԹՈՒՄԱՍ* յեսին:

Զոր եւ եսոյ ի սբ հոգոյն ընտրեալ.... կթղկս վեր ... կարգի. զամ. Է. ոչ աւելի, բազում նզանց սա հանդիպի:

Որ եւ հանգեաւ ի մեծ թւի. Ռ.Ծ.Է. երրորդի յաւագ պահոց երեքշաբթի, ի յերրորդումն շաբաթին:

Ո՛վ սբ մանկունք Նոր Սիոնի որք եւ յեսոյ գայք զկնի, երեսկոխան ձերում ոտի միայն խնդիրս ձէնջ կատարի:

Զանարժանս յորժամ կարդայք որ կայ գրեալ յայսմ արձանի, սբ աղօթիւք ձեր հայցեցէք, ասաչիք ած ողորմի:

*(Ներկայ Տապանաքարին արձանագիրը տե՛ս ՍԻՕՆ* 1868, *էջ* 214)։